

Ֆարմակոլոգիայի հիմնական սկզբունքները. Ֆարմակոլոգիան որպես քիմիական նյութերի օգնությամբ օրգանիզմի կենսագործունեության պրոցեսների ղեկավարման մասին գիտություն: Դեղերի թերապևտիկ, ֆարմակոդինամիկ և պլացեբո- ազդեցություններն ապահովող գործոնները: Դեղերը՝ գիտական, ժողովրդական և այլ ընտրանքային բժշկության մեջ (բժշկական կուլտեր): Դեղերի ստեղծման աղբյուրները և փուլերը: Ֆարմակոկինետիկայի հիմունքները:

Դեղերի տեղաշարժը օրգանիզմում՝ ներծծում, տեղաբաշխում, արտազատում: Դեղերի տեղաշարժը կենսաբանական պատնեշներով: Փոխադրման հիմնական գործոնները: Ջրային դիֆուզիա (էպիթել, մազանոթներ, գլխուղեղ, ընկերք): Դիֆուզի ալիպիդներում՝ շարժիչ ուժը, պայման-ները և սահմանափակումները, դիֆուզիայի արագությունը (Ֆիկի օրենք): Թաղանթներով փոփոխականի ոնիզացիայով նյութերի փոխադրումը (Գենդերսոն – Գասսելբախի օրենք): Փոխադրման կառավարումը: Նյութերի ակտիվ տեղափոխումը տարբեր փոխադրիչների օգնությամբ: Օրգանիզմում դեղերի տեղափոխման վրա ազդող հիմնական գործոնները: Դեղերի նախահամակարգային արտազատումը (առաջին անցման էֆեկտ լյարդով): Ֆարմակոկինետիկայի բաղկացուցիչները՝ կենսամատչելիություն, տեղաբաշխում, դեղերի քլիրենս: Ֆարմակոկինետիկ մոդելներ: Դեղերի ներծծման և արտազատման քանակական օրենքները:

Ֆարմակոկինետիկ հիմնական ցուցանիշները՝տեղաբաշխման ծավալ, քլիրենս, արտազատման հաստատուն, կիսադուրսբերման ժամանակ: Դրանց բնույթը, որոշման և քանակական արտահայտման սկզբունքները, մեծությունները, փոխկապակցվածությունը, նշանակությունը դեղերի դոզավորման ռեժիմի ղեկավարման համար:

Դեղերի դոզավորման սկզբունքները. Արյան մեջ դեղերի ներմուծումը հաստատուն արագությամբ. Արյան մեջ խտության կինետիկան, կայուն խտության հաշվարկը ըստ դեղաչափի և պրեպարատի քլիրենսի: Թերապևտիկ խտության ղեկավարումը: Դեղերի ընդհատվող դեղաչափավորում. ստացիոնար խտության և

նրա տատանման սահմանների հաշվարկը, թերապևտիկ խտության ղեկավարումը: Դիսկրետ դեղաչափերի ներմուծման համապատասխան ինտերվալը:

Սկզբնական դեղաչափ. դրա օգտագործման բուժական իմաստը և հիմնավորումը, անհատական սկզբնական դեղաչափի հաշվարկը ըստ ֆարմակոկինետիկ ցուցանիշների: Սկզբնական դեղաչափերի կիրառման պայմանները և սահմանափակումները: Պահպանողական դեղաչափեր. դրանց կիրառման բուժական իմաստը և պայմանները: Պահպանողական դեղաչափերի հաշվարկը՝ արյան մեջ պրեպարատի խտության տատանումների թույլատրելի ինտերվալում դեղաչափավորման լավագույն ռեժիմը ապահովելու համար:

Դեղերի ֆարմակոկինետիկայի վրա ազդող գործոնները. Դեղերի ֆարմակոկինետիկայի անհատական, տարիքային, սեռային տարբերությունները: Տեղաբաշխման ծավալի վրա ազդող գործոնները, դրա քանակական հաշվարկը մարմնի քաշի պակասի, ավելորդ քաշի, այտուցների, հեղուկների սեկվեստրացիայի, ջրազրկման պայմաններում անհատական դեղաչափերի շտկման ժամանակ: Բլիրենսը որպես ֆարմակոկինետիկայի հիմնական դետերմինանտ: Դեղերի կամային քլիրենս և նրա բաղադրիչները: Երկկամային քլիրենսի կախվածությունը դեղերի ֆիզիկոքիմիական հատկություններից (բևեռայնություն, իոնոգենություն, մոլեկուլյար զանգված, արյան սպիտակուցների հետ կապվելու ընդունակություն): Լյարդային քլիրենս. Նյութափոխանակային ձևափոխումը և ձերբազատումը լեղու մեջ: Նյութափոխանակային քլիրենսի կենսաբանական ուղղվածությունը: Լեղիով ձերբազատվող նյութերի հիմնական հատկությունները, լյարդային քլիրենսի դետերմինանտները և սահմանափակումները: Դեղերի էնտերոհեպատիկ շրջանառությունը:

Դեղերի քլիրենսը փոփոխող գործոնները: Դեղաչափավորման ռեժիմի ընտրությունը. Դեղերի փոխազդեցությունները տեղափոխման և քլիրենսի ուղիներում: Դեղերի նյութափոխանակության առանձնահատկությունները (զենետիկ, սեռային, տարիքային):

Դեղերի ֆարմակոկինետիկայի վրա ազդող հիվանդությունները: Դեղաբուժության շտկումը լյարդի և երկկամների հիվանդությունների ժամանակ: Ընդհանուր

մոտեցումները: Դեղաչափավորման շտկումը պրեպարատի ընդհանուր քլիրենսի հսկողության տակ, նախընտրելի տարբերակները: Շտկումը՝ երիկամների մնացորդային ֆունկցիայի հսկողության տակ: Դեղաբուժության շտկումը լյարդի ախտահարումների և օրգանիզմի այլ ախտաբանական վիճակների ժամանակ:

Դեղերի կենսաձևափոխումը. Ֆարմակոկինետիկ պրոցեսներում դեղերի մետաբոլիզմի հիմնական ուղղվածությունը, կենսաբանական իմաստը, հյուսվածքային տեղակայումը և դերը: Դեղերի նյութափոխանակային ձևափոխման երկու փուլերը: Քսենոբիոտիկների նյութափոխանակության միկրոսոմալ համակարգերը՝ մոլեկուլար կառուցվածքը, ֆերմենտատիվ խթանումը և ընկճումը: Դեղերի կենսաձևափոխման հիմնական տիպերը (P-450 կախյալ և անկախ օքսիդացում, վերականգնում, հիդրոլիզ, կոնյուգացիա): Դեղերի կենսաձևափոխումը թունավոր վերջնանյութերի առաջացմամբ: Դեղերի կենսաձևափոխման կլինիկական նշանակությունը: Քսենոբիոտիկների մետաբոլիզմի պոպուլյացիոն սփռվածությունը և գենետիկական բազմաձևությունը, դեղերի կենսաձևափոխման կախվածությունը սեռից, տարիքից, մարմնի քաշից, էկոլոգիական գործոններից, ծխելուց, խմիչքից: Դեղերի մետաբոլիկ փոխազդեցությունը: Դեղերի կենսաձևափոխման վրա ազդող հիվանդությունները:

Ֆարմակոդինամիկ պրոցեսներ. Դեղերի ազդեցության ֆիզիկոքիմիական և քիմիական մեխանիզմները: Ընկալիչային հայեցակարգը ֆարմակոլոգիայում, աղբյուրները և զարգացման ուղղությունները: Դեղերի ընկալիչների մոլեկուլար բնույթը: Դեղերի ազդեցության ազդանշանային մեխանիզմները, տրանսթաղանթնային ազդանշանների տիպերը և երկրորդային միջնորդները:

Դեղերի ազդեցությունների քանակական օրենքները: Կլարկի մոդելը և նրա արդյունքները: Խտություն – ազդեցություն ընդհանուր կախվածությունը նորմալ և լոգնորմալ կորրեկնատներում: Քանակական ֆարմակոլոգիայի տերմիններն ու հասկացությունները. ազդեցություն, արդյունավետություն, աֆինիտետ, ազոնիստ (լրիվ, մասնակի), անտագոնիստ: Դեղերի փոխազդեցությունները: Անտագոնիզմ. ֆարմակոլոգիական (մրցակցային, ոչ մրցակցային), ֆիզիոլոգիական, քիմիական:

Նյութի ակտիվության և արդյունավետության փոփոխությունը՝ կախված անտագոնիզմի տեսակից: Գումարային սիներգիզմ և պոտենցում:

Դեղերի ակտիվության և արդյունավետության փոփոխությունները: Ազդեցության աստիճանավորված և քվանտային գնահատականը: Դեղերի ազդեցության քանակական գնահատման ձևերը փորձարարական և կլինիկական պրակտիկայում: Դեղերի ազդեցության տարատեսակները և փոփոխականությունը. հիպոռեակտիվություն և հիպերռեակտիվություն, տոլլեռանտություն և տալսիֆիլաքսիա, գերակտիվություն և գերզգայունություն, իդիոսինկրազիա: Դեղերի ազդեցությունների տարատեսակության պատճառները, ընկալիչների քանակական փոփոխությունների, հասանելիության և զգայունության փոփոխությունների մեխանիզմները:

Դեղերի ազդեցության ընտրողականությունը և սպեցիֆիկությունը: Բուժական, կողմնակի և թունավոր ազդեցություններ: Դրանց բնույթը ընկալիչային հայեցակարգի տեսանկյունից: Դեղերի կողմնակի և թունավոր ազդեցությունների դեմ պայքարի բուժական ռազմավարությունը:

Դեղերի անվտանգության գնահատումը: Թերապևտիկ ինդեքս և անվտանգության ստանդարտ սահմանները, դրանց փորձարարական և կլինիկական ուսումնասիրման մեթոդները: Ֆարմակոլոգիայի և թունաբանության հիմնական մեթոդները: Տարբեր տեսակների փորձարարական կենդանիներին ֆարմակոլոգիական նյութերի ներմուծման մեթոդները: Ֆարմակոլոգիական նյութերի՝ մոլեկուլյար, գենետիկ, բջջային, օրգանային և համակարգային մակարդակներով ազդեցությունների ուսումնասիրման հիմնական մոտեցումները: Ֆարմակոլոգիական նյութերի անվտանգության փորձարարական գնահատականը:

Մասնավոր ֆարմակոլոգիա. Ծայրամասային նյարդային համակարգի վրա ազդող միջոցներ: Աֆերենտ նյարդավերջույթների վրա ազդող միջոցներ: Տեղային անզգայացնող, տոպոլ, պատոլ, ադոսրբոլ և գրգռող միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, ակտիվության քիմիական դետերմինանտները, կիրառման ոլորտները: Վեգետատիվ նյարդային համակարգի վրա ազդող միջոցներ: Խոլիներգիկ միջոցներ: Ծայրամասային նյարդային

համակարգի նյարդամիջնորդանյութերը և ընկալիչները: Խոլիներգիկ գրգռափոխանցում: Ացետիլխոլինի ձերբազատման մեխանիզմը և նրա կարգավորումը: Խոլինոընկալիչների մոլեկուլյար կառուցվածքը և հետերոգենությունը. մուսկարինային (M1, M2, M3, M4, M5) և նիկոտինային (NM, NN) խոլինոընկալիչներ, տեղակայումը, ֆիզիոլոգիական և ֆարմակոլոգիական խթանման էֆեկտները: Արտասինապսային խոլինոընկալիչներ:

M և N խոլինոմիմետիկներ և հակախոլինեսթերազային դեղեր: Ազդեցության մեխանիզմը, ակտիվության կառուցվածքային դետերմինանտները, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Ծխելու դեմ պայքարի միջոցները: Խոլինեսթերազայի ռեակտիվատորներ, բուժումը հակախոլինեսթերազային դեղերով թունավորման ժամանակ: Ացետիլխոլինի ձերբազատումը խթանողներ:

M – խոլինոպաշարիչներ (հակամուսկարինային ագենտներ). Դասակարգումը, ակտիվության կառուցվածքային դետերմինանտները, ազդեցության մեխանիզմը, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Թունավորումը ատրոպինով և օգնության միջոցները:

Հանգուցապաշարիչներ (հականիկոտինային ագենտներ). Դասակարգումը, ակտիվության կառուցվածքային դետերմինանտները, ազդեցության մեխանիզմը, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Նյարդամկանային պաշարիչներ (միոնեյաքսանտներ՝ մկանաապալարիչներ). դասակարգումը, ապաբ և եռացնող և հակաապաբ և եռացնող մկանաապալարիչների կառուցվածքը և ազդեցության մեխանիզմը, կիրառումը բժշկության մեջ: Կուռարեանման միջոցների անտագոնիստները:

Կենտրոնական խոլինոլիտիկներ, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը բժշկության մեջ: Երրորդային և չորրորդային ամոնիումային միացությունների ֆարմակոկինետիկայի առանձնահատկությունները:

Ադրեներգիկ միջոցներ: Սիմպատիկ նյարդային համակարգի կառուցվածքային և ֆունկցիոնալ կառուցվածքը: Նոր ադրենալինի և դոֆամինի սինթեզը, պահեստավորումը, ձերբազատումը, կենսաբանական ակտիվազերծումը:

Ադրենոընկալիչների մոլեկուլյար կառուցվածքը և հետերոգենությունը. a1, a2, b1, b2, b3 ադրենոընկալիչներ. տեղակայումը, ֆիզիոլոգիական և ֆարմակոլոգիական խթանման էֆեկտները: Արտասինապաային ադրենոընկալիչներ: Ադրեներգիկ ազոնիստներ՝ կատեխոլամիններ (ադրենալին, նոր ադրենալին, դոֆամին), a-ադրենոմիմետիկներ, b - ադրենոմիմետիկներ, սիմպատոմիմետիկներ: Քիմիական կառուցվածքը, ազդեցության մեխանիզմները, ֆարմակոլոգիական ազդեցությունները, կիրառումը կլինիկական և փորձարարական բժշկության մեջ: Ադրեներգիկ անտագոնիստներ (ադրենոպաշարիչներ). դասակարգումը և ֆարմակոլոգիական հատկությունները: Ընտրողական a և b - ադրենոմիմետիկներ: Հասկացություններ քինսիմպատոմի-մետիկ ակտիվության մասին: Ադրենոպաշարիչների կլինիկական և փորձարարական կիրառումը: Սիմպատոլիտիկներ. ազդեցության մեխանիզմները, կլինիկական և փորձարարական կիրառումը:

Կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող միջոցներ: Դեղեր նարկոզի համար, դասակարգումը, ֆիզիոլոգիական հատկությունները, ազդեցության մեխանիզմները և ֆարմակոդինամիկան, կլինիկական կիրառումը և անվտանգությունը: Նարկոզի բարդությունների կանխարգելումը և վերակենդանացումը գերդոզավորման ժամանակ:

Տազնապամարիչներ (անքսիոլիտիկներ), դասակարգումը, անքսիոլիտիկ ազդեցության էությունը: Բենզոդիազեպիններ, ազդեցության ֆիզիոլոգիական և մոլեկուլյար մեխանիզմները, կիրառումը բժշկության մեջ, ընտելացումը և դեղորայքային կախյալությունը: Նորագույն անքսիոլիտիկներ (բուսապիրոն):

Քնաբեր միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները և տարբեր սերունդի քնաբերների համեմատական բնութագիրը: Ազդեցությունը քնի կառուցվածքի վրա: Փորձարարական և կլինիկական կիրառումը: Դեղորայքային կախյալությունը, քնաբերներով սուր թունավորում և ֆարմակոթերապիայի սկզբունքները: Սպիրտներ. էթանոլի ֆարմակոլոգիան և թունաբանությունը: Ալկոհոլիզմի դեղաբուժությունը:

Թմրաբեր ցավազրկողներ, քիմիական կառուցվածքի հիմնական տարրերը, ազդեցության մեխանիզմները և թմրաբեր ցավազրկողների համեմատական բնութագիրը: Կլինիկական և փորձարարական կիրառումը: Թմրաբեր ցավազրկողների անտագոնիստներ: Թմրաբեր ցավազրկողներով սուր թունավորումները և դրանց ֆարմակոթերապիայի սկզբունքները: Թմրամոլությունը և բուժման մոտեցումները:

Ոչ թմրաբեր ցավազրկողներ, դասակարգումը, ցավազրկող ազդեցության առանձնահատկությունները: Ազդեցությունը ցավազգացողության ձևավորման ծայրամասային մեխանիզմների վրա: Կլինիկական և փորձարարական կիրառումը:

Հակաէպիլեպտիկ (հակացնցումային) միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները և արդյունավետությունը էպիլեպսիայի տարբեր ձևերի ժամանակ: Էպիլեպտիկ ստասուսի պաշարումը:

Հակապարկինսոնային միջոցներ, էքստրապիրամիդալ խանգարումների ֆարմակոլոգիական շտկման սկզբունքները: Դասակարգումը, ազդեցության մեխանիզմները և ժամանակակից հակապարկինսոնային միջոցների արդյունավետությունը: Կողմնակի ազդեցությունների հաղթահարման ուղիները: Հակափսիխոտիկ միջոցներ, նեյրոլեպտիկների հիմնական խմբերը և հակափսիխոտիկ ազդեցության մեխանիզմները: Դրանց համեմատական բնութագիրը: Կիրառումը բժշկության մեջ և փորձարարական ֆարմակոլոգիայում: Հակադեպրեսանտներ և հակամանիակալ միջոցներ, հիմնական խմբերը, ազդեցության մեխանիզմները և կլինիկական կիրառումը: Լիթիում, ազդեցության մեխանիզմը և կլինիկական կիրառումը:

Հոգեխթանիչներ և անալեպտիկներ, հոգեխթանիչների ազդեցության ֆիզիոլոգիական և մոլեկուլյար մեխանիզմները: Կենտրոնական և ծայրամասային ազդեցությունները: Կիրառումը բժշկության մեջ և ֆարմակոլոգիայում: Դեղորայքային կախյալություն: Անալեպտիկ ազդեցության էությունը և մեխանիզմները: Անալեպտիկների բժշկական կիրառումը:

Նոոտրոպ միջոցներ, հասկացություն նոոտրոպ ազդեցության մասին և նրա փորձարարական տեստավորման մեթոդները, նոոտրոպների կլինիկական կիրառումը:

Օրգան համակարգերի վրա ազդող միջոցներ: Շնչառական օրգանների ֆունկցիայի վրա ազդող միջոցներ: Շնչառության խթանիչներ և հակահազային միջոցներ, դասակարգումը, շնչառությունը խթանող ազդեցության մեխանիզմները, բժշկական կիրառումը: Խորխաբեր միջոցներ, ազդեցության մեխանիզմը, բժշկական կիրառումը: Բրոնխոլիտիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական կիրառման առանձնահատկությունները: Բրոնխեալ ասթմայի բուժման ժամանակակից սկզբունքները: Թոքերի այտուցի ժամանակ կիրառվող միջոցներ, թոքերի այտուցի բուժման սկզբունքները, հակաբորբոքային միջոցների, դեհիդրանտների, միզամուղների, սրտային գլիկոզիդների և հիպոտենզիվ պրեպարատների կիրառումը: Սրտանոթային համակարգի և երիկամների ֆունկցիայի վրա ազդող միջոցներ: Կարդիոտոնիկ միջոցներ:

Սրտային գլիկոզիդներ, ազդեցության մեխանիզմը և բուժական ազդեցությունը խրոնիկական սրտային անբավարարության ժամանակ: Պրեպարատների համեմատական բնութագիրը: Սրտային գլիկոզիդներով ինտոքսիկացիան, դրա բուժումը և կանխարգելումը:

Ոչ գլիկոզիդային բնույթի կարդիոտոնիկ միջոցներ: Հակաառիթմիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները: Կլինիկական կիրառումը, վտանգները և կողմնակի ազդեցությունները: Հակահեղձուկային միջոցներ, ստենոկարդիայի առաջացման պատճառները և զարգացման մեխանիզմները: Հակահեղձուկային միջոցների հիմնական խմբերը: Նիտրատների, Ե-ադրենոպաշախիչների, կալցիումական մղանցքների պաշարիչների, անոթալայնիչների հակահեղձուկային ազդեցության մոլեկուլյար և ֆիզիոլոգիական մեխանիզմները:

Միոկարդի ինֆարկտի դեղաբուժության սկզբունքները: Հակահիպերտենզիվ միջոցներ, տարբեր խմբերի հակահիպերտենզիվ միջոցների ֆարմակոլոգիական

հատկությունները և կլինիկական կիրառումը: Հիպերտոնիկ հիվանդության և հիպերտենզիվ վիճակների ժամանակակից դեղաբուժությունը: Համակցված բուժման սկզբունքները: Միզամուղներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, համեմատական բնութագիրը: Ուրիկոզուրիկ միջոցներ: Միզամուղների կլինիկական ֆարմակոլոգիան: Հակաաթերոսկլերոտիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական կիրառումը:

Մարսողական օրգանների ֆունկցիաների վրա ազդող միջոցներ: Ախորժակի խթանիչներ և անոռեքսիզեններ, ազդեցության մեխանիզմը, կլինիկական կիրառումը: Ստամոքսի հյութազատությունը խթանող միջոցներ, ազդեցության մեխանիզմը, կլինիկական կիրառումը: Փոխարինող թերապիայի միջոցները, պրեպարատները, կլինիկական կիրառումը: Հակախոցային միջոցներ, անտացիդներ, հակասեկրետորներ, գաստրոպրոտեկտորներ, *Helicobacter pylori*-ի էռադիկացիայի միջոցներ: Փսխաբեր և հակափսխումային միջոցներ, պրեպարատները, ազդեցության մեխանիզմը, կիրառումը: Լեղամուղ միջոցներ, լեղու գոյացումը և արտազատումը խթանող միջոցների ազդեցության սկզբունքները: Կլինիկական կիրառումը: Ենթաստամոքսային գեղձի արտազատիչ ֆունկցիայի խանգարման ժամանակ կիրառվող միջոցներ, ազդեցության սկզբունքները, կլինիկական կիրառումը: Աղիների մոտորիկան ընկճող միջոցներ, դասակարգումը, կլինիկական կիրառումը: Աղիների մոտորիկան խթանող միջոցներ, լուծողականներ, դասակարգումը, կլինիկական կիրառումը:

Արգանդային միջոցներ: Ծննդաբերական պրոցեսը խթանող և արգանդային արյունահոսությունները դադարեցնող միջոցներ, ազդեցության մեխանիզմները և կլինիկական ֆարմակոլոգիան: Ե-ադրենոմիմետիկների կիրառումը որպես տոկոլիտիկ միջոցներ:

Արյան համակարգի վրա ազդող միջոցներ: Անեմիաների ժամանակ կիրառվող միջոցներ, լեյկոպոեզը խթանողներ և ընկճողներ, ազդեցությունները և կիրառումը: Հակահեմոռագիկ և հեմոստատիկ միջոցներ, տեղային և

համակարգային կոագուլյանտներ, որոնք կիրառվում են արյունահոսությունների դադարեցման, արյան մակարդելիության խանգարումների և ակտիվացած ֆիբրինոլիզի ժամանակ: Հակակոագուլյանտներ, դասակարգումը, հեմոստագի վրա ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: Հեպարինի և անտոլդակի հակակոագուլյանտների անտագոնիստներ: Թրոմբոլիտիկներ, ազդեցության մեխանիզմը, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակաազդեգանտներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կիրառումը:

Էնդոկրին միջոցներ: Դասակարգումը: Ստացման աղբյուրները: Կենսաբանական ստանդարտիզացիայի և դեղաչափավորման սկզբունքները:

Հիպոթալամոսի և հիպոֆիզի հորմոնալ պրեպարատներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան:

Թիրեոիդային և հակաթիրեոիդային միջոցներ, պրեպարատների ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան:

Պարաթիրեոիդային միջոցներ, ազդեցության մեխանիզմը, գործնական կիրառումը: Հակադիաբետիկ միջոցներ, մարդու և կենդանական ինսուլիններ, ռեկոմբինանտ ինսուլիններ, դեղաչափավորման սկզբունքները և կիրառումը: Պերոռալ հիպոգլիկեմիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմները, կիրառումը:

Կորտիկոստերոիդներ, քիմիական կառուցվածքը, գլյուկոկորտիկոիդների ֆարմակոդինամիկական և կլինիկական ֆարմակոլոգիան, կորտիկոստերոիդների սինթեզը ընկճողներ: Միներալկորտիկոիդներ:

Իգական սեռական հորմոններ, էստրոգենների և հեստագենների քիմիական կառուցվածքը և ֆիզիոլոգիական նշանակությունը: Էստերալ և պարէտերալ կիրառման պրեպարատներ: Հակաէստրոգենային և հակահեստագենային պրեպարատներ: Պերոռալ հակաբեղմնավորիչներ:

Անդրոգենային պրեպարատներ և անաբոլիկ ստերոիդներ, ֆիզիոլոգիական և ֆարմակոլոգիական ազդեցությունները, կլինիկական կիրառումը:

Հակաանդրոգենային պրեպարատներ, ազդեցության մեխանիզմը, կիրառումը: Ֆերմենտային պրեպարատներ: Պրոտեոլիտիկ ֆերմենտներ, պրոտեոլիզը

ընկճողներ: Պրեպարատները, կլինիկական կիրառումը: Վիտամինային պրեպարատներ: Զրալուծ և ճարպալուծ վիտամինների պրեպարատներ, վիտամինների նյութափոխանակային նշանակությունը, ազդեցությունը նյարդային, սրտանոթային համակարգերի, աղեստամոքսային տրակտի, արյունաստեղծման, էպիթելյար ծածկույթների վիճակի և ռեգեներացիայի պրոցեսների վրա: Բժշկական կիրառումը:

Հակաբորբոքային, հակապոդագրիկ, հակաալերգիկ և իմունոմոդուլացնող միջոցներ: Ստերոիդային հակաբորբոքային միջոցներ: Ոչ ստերոիդային հակաբորբոքային միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակապոդագրիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակաալերգիկ միջոցներ, դասակարգումը, ազդեցության մեխանիզմը, կլինիկական ֆարմակոլոգիան: Քլորոֆինի և ոսկու աղերի ֆարմակոլոգիական հատկությունները և կլինիկական կիրառումը շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունների ժամանակ:

Իմունոխթանիչներ և իմունոդեպրեսանտներ, դասակարգումը, հիմնական պրեպարատները, բժշկական կիրառումը: Ալկալիական և հողալկալիական մետաղների աղեր:

Զրաաղային խանգարումները և դրանց շտկման սկզբունքները նատրիումի, կալիումի, կալցիումի պրեպարատներով: Մագնեզիումի իոնների կենսաբանական նշանակությունը և դրա պրեպարատների կիրառումը կլինիկական բժշկության մեջ: Թթվահիմնային հավասարակշռության վերականգնման սկզբունքները: Հակամիկրոբային և հակամակաբուժային միջոցներ: Քիմիոթերապևտիկ միջոցների հայտնաբերման պատմությունը (Էռլիխ, Ֆլեմինգ, Դոմակզ, Զինաիդա Երմոլեվա):

Անտիբիոտիկներ: Դասակարգումը, հասկացություն հիմնական և պահեստային անտիբիոտիկների մասին: Պենիցիլիններ, ցեֆալոսպորիններ, ցեֆամիցիններ և օքսաբետտա-լակտամներ, բետտա-լակտամազի արգելակողներ: Մոնոբակտամներ, կարբապենեմներ: Մակրոլիդներ և ազալիդներ:

Գլխուպեպտիդներ, տետրացիկլիններ: Ամինոգլիկոզիդներ, լինկոզամիդներ: Քլորամ ֆենիկոլ, ֆուզիդիաթթու: Պոլիմիքսիններ:

Տարբեր խմբերի անտիբիոտիկների ազդեցության մեխանիզմները և հակաբակտերիալ ոլորտը, կիրառումը վարակների բուժման և կախարգելման համար: Անտիբիոտիկոթերապիայի բարդությունները, դրանց կանխումը: Սուլֆանիլամիդներ և տրիմետոպրիմ, կոտրիմոքսազոլ, ազդեցության մեխանիզմը, հակաբակտերիալ ոլորտը, կիրառումը:

Միզային անտիսեպտիկներ, ազդեցության մեխանիզմը, հակաբակտերիալ ոլորտը, կիրառումը: Ֆտորիսինոլոններ և մետրոնիդազոլ, ազդեցության մեխանիզմը, հակաբակտերիալ ոլորտը, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակամիկոբակտերիալ միջոցներ, հակասպիրոխետային միջոցներ: Տուբերկուլոզի և սիֆիլիսի բուժման ժամանակակից միջոցները և սկզբունքները: Հակավիրուսային միջոցներ: Հիմնական խմբերը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: ՁԻԱՀ-ի բուժման համար կիրառվող միջոցներ: Հակասնկային միջոցներ: Դասակարգումը, ազդեցության ոլորտը, կիրառումը: Մակերեսայի և համակարգային միկոզների բուժման համար կիրառվող միջոցներ:

Հակամակաբուձայի նմիջոցներ: Մալարիայի բուժման և կանխարգելման համար կիրառվող միջոցներ: Լյամբլիոզի, ամեոբիազի, տրիխոմոնոզի, տոքսոպլազմոզի, լեյշմանիոզի դեմ կիրառվող միջոցներ: Ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: Հակահելմինտային միջոցներ: Դասակարգումը, ազդեցության մեխանիզմները: Կիրառման հիմնական սկզբունքները: Հակառուտուցային միջոցներ: Հիմնական խմբերը, ազդեցության մեխանիզմները, կլինիկական ֆարմակոլոգիան: Ցիտոստատիկների իմունոնճշիչ և հակապրոլիֆերատիվ հատկությունները: Անտիսեպտիկ և դեզինֆեկցող միջոցներ: Հասկացություն անտիսեպտիկայի և դեզինֆեկցիայի մասին: Դասակարգումը, տարբեր խմբերի անտիսեպտիկների հիմնական ազդեցության մեխանիզմները, կիրառման առանձնահատկությունները: Դեղերի փոխազդեցությունները: Դեղերի Ֆիզիկոքիմիական, ֆարմակոդինամիկ,

Ֆարմակոկինետիկ փոխազդեցությունները: Ֆարմացևտիկ և ֆարմակոլոգիական համատեղելիություն: Ֆարմակոլոգիական նյութերով և թույներով սուր թունավորման բուժման սկզբունքները: Մարդու օրգանիզմում թույների արտորոգիայի կանխարգելման միջոցները՝ ներմուծման տարբեր ուղիների դեպքում: Թունազերծման և թույների արտազատման արագացման մեթոդները: Ոչ սպեցիֆիկ և սպեցիֆիկ հակաթույներ, կիրառումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Белоусов Ю.Б., Моисеев В.С., Лепяхин В.К. Клиническая фармакология и фармакотерапия: М., Универсум Паблишинг, 1997.
2. Венгеровский А.И. Лекции по фармакологии для врачей и провизоров, 3-е издание, М., 2006.
3. Информация о лекарственных средствах для специалистов здравоохранения. USPDI Русс. изд. Вып.1-6. М: РЦ , 1996, 2000.
4. Клиническая фармакология. (Под ред. В.Г. Кукеса). 2 изд. М: 1999.
5. Лекарственные препараты в России. Справочник Видаль. М., 2005.
6. Метелица В.И. Справочник по клинической фармакологии и сердечно-сосудистых средств. М., Медпрактика, 2005.
7. Харкевич Д.А. – Фармакология. М., Медицина, 2005.
8. British National Formulary (BNF), British medical Association, 2006.
9. Clinical Pharmacy and Therapeutics. Ed. By Roger Walker & Clive Edwards, 3-th ed., Churchill Livingstone, 2003.
10. **Goodman & Gilman's The Pharmacological Basis of Therapeutics.** Ninth Edition. Pergamon, 1996.
11. Katzung B.G. Basic and Clinical Pharmacology. Appleton & Lange, 7-8-th ed., 1997-2003.
12. **Rang & Dale's Pharmacology**, 7-th ed. Published by Elsevier Inc., 2012.
13. The Use of Essential Drugs. Seventh Report of the WHO Expert Committee. WHO, Geneva, 1997.